նորա, բայց ոչ կարացաք դալ վասն դժուարութեան ճանապարհին, որ յաղագս ասպատակաց եւ աւազակաց: Այլ ողբերգական եւ միխիթարական թուղթս գրեցաք՝ երիս նամակս եւ առաքեցաք առ ձեզ թէպէտ ոչ կատարելագոյն, այլ դուզնաքեայ. զի կամիմք մեք ինքնին դալ եւ միխիթար(ել) զձեզ, թէպէտ անմիխիթար է սուքն մեր: Բայց այժմ բազում պատգամաւորս եւ միջնորդս արկանելով, թէպէտ մեք ոչ կամեցաք զառաջինն, այլ սոքայ ժտելով ոչ միանգամ կամ երկիցս, այլ բազում անգամ առաքելով առ մեզ արս հաւատարիմս հանդերձ ձեռագրովք կնքելովք յամենայն ժողովրդենէ նոցա. եւ մեք տեսաք զջերմեռանդ սէրն եւ զկատարեալ զղջումն սոցա եւ ոչ կարացաք ընդդիմանալ սոցայ: Զի ես պատրաստեալ էի որ ամենս դայի յԱմիթ զՅայտնութիւնն ի մէջ ձեզ առնէի. բայց այժմ ի Կոստանդնուպալսէ եկին առ մեզ վերստին հրաւիրակք յուժգնայգոյն քան զառաջինսն ստիպեն զմեզ գնալ առ նոսայ: Վասն որոյ կամ եղեւ մեզ գնալ[3]. բայց ոչ վասն պատրիարգութեան, որպէս նոքայ կամին, այլ վասն հաշտութեան, որպէս (ես) կա-

---

[3] Հմմտ. Գրիգոր Դարանաղցի, էջ 115 եւ 117· «Զչար (Ցակոբ) Նաղաշ(էն) հարցուկս եղէ, թէ ո՞ւր է· ասացին թէ ի Կեսարիա զրկեցին վէքիլէնն՝ զմեծ Գրիգոր վարդապետն ի բերել··· Եւ յետ քանի մի աւուրց եկաւ Կեսարացին մեծաւ ամբոխիւ· եմուտ ի Բիւզանդիա ահեղագոչ եւ խրոխտ կերպիւ որպէս զառիւծ, որ ամենայն Հայոց ազգն սարսեցին ի նմանէ»· այս տեղի կ'ունենայ 1608 դեկտեմբերին: